

Հայոց. նոթաւք զարդարէին յամենայն տունս աւտարք եւ ընտանիք: 7 Նմանեցուցեալ ինքեանց ի յառաջանալ¹ փութային եւ գորդիս երանելոյ² Կամսարականին Արշաւայ տեառնն Արշարունեաց, որք եւ ազգախառն իւրեանց էին ծնունդք դստեր մարտիրոսին Վարդանայ, խրատել եւ հրահանգել³ ըստ իւրեանց իմաստութեան եւ արուեստի ջանային:

8 Եւ զայսպիսի ինչ բարւոյ մասունս առնել առատ⁴ եւ հոգալ՝ առաւել եւս կամաւոր յաւժարութեամբ յորդորագոյն էր աւագ որդին սրբոյն Հմայեկայ, որում անուն էր Վահան: 9 Զանգի էր այր մտացի, առողջախորհուրդ եւ բարեսէր. յոր գործ եւ ձեռն արկաներ⁵ գործել՝ Տէր յաջողէր ի ձեռն նորա, եւ զաւրանայր. նա եւ գործակալք Պարսիկք որ գային ի դրանէ, թեպէտ ոչ կամաւ, այլ ըստ Աստուծոյ սաղրելոյ սիրէին զնա եւ պատուէին: 10 Որք եւ առաջի թագաւորին Պարսից գովէին զլաւութիւն առնն եւ անմոռաց յիշէին. մինչեւ ինքն իսկ թագաւորն Պերոզ գլխովին ծանեաւ զնա եւ առ լաւս ունէր, եւ յանդիման ամենեցուն գովէր եւ արժանի պատուոյ հաշուէր: 11 Բայց արժանի ըստ նորա իմաստիցն եւ քաջութեանն թեպէտ եւ ածեր զմտաւ պատուել զնա, այլ յիշելով զհարցն եւ զնախնեացն նորա զիրս եւ զգործս, եւ ո՛րպէս հասապագ ընդդիմութեամբ եւ պատերազմաւ աշխատ կալեալ էր զնոսա՝ յապաղեալ կասեր, եւ լուեալ⁶ թագուցանէր զարժան պատիւ տալ նոցա. մանաւանդ իբրեւ հապստեալ լսէր զնախանձորդացն զքանսարկութիւն, որք առ վտանգի ժամանակի տանուտեարք Հայոց անուանեալ էին, զորս կարի առաւելապէս երկեցուցանէր աճումն յառաջադիմութեան⁷ Մամիկոնէին⁸ Վահանայ. կասկածէր երկիւղիւ առ ի յառաջիկայսն՝ զանարժան գոռոզացելոցն բեկանել⁹ զսիրտս:

12 Իսկ լաւ ոք այր յանկարծ եւ կամ արժանաւոր թեպէտ եւ էր ի ժամանակին, որպէս լաւ այր Բաբիկն Սիւնի եւ կամ սքանչելին Առնակն Ամատունի եւ կամ այլ ոք նման նոցին, ի հոգեսպանութենէ մոլեկան թագաւորին եւ ի կատաղութենէ ամբարշտեալ ժամանակին իշխանացն, որպէս նապաստակք ի սլացմանէ գիշակեր արծուեաց, ի ծերպս վիմաց եւ կամ ի մացառուտ տեղիս¹⁰ մայրեաց դաւղեալք թաքչէին. կարեւոր համարէին համբերու-

1 Ձկտ. եւ յառաջանալ

2 ՏՏ. երանելոյ

3 Ձ. խրատեալ եւ հրահանգեալ

4 Ձ. առնել առոք

5 Ձ. արկաներ, ան-ի վրայ ջնջման նշան

6 Թերեւս՝ եւ լուեալ

7 ՏՏ. յաջողումն յառաջադիմութեան

8 Ձ. մամիկոնէիցն

9 Ձկտ. բեկանէր. այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.

10 Ձ. ի տեղիս